ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 12 հունիսի 2019թ. ժամը 14:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Կարապետ Հակոբյան
Անդամներ	Գեղամ Գևորգյան
	Անահիտ Հովհաննիսյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք ռադիատորների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 595 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանը (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 66ա շենք, բն. 55, էլ՝ փոստ՝ amnorog@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը, որը կազմում էր 573 750 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանի հետ կնքել ռադիատորների մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Կարապետ Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ _____ Գեղամ Գրիգորյան

_____ Անահիտ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան